

ԱՐՑԱԽԵԱՆ ՇԱԲԱԹ

Թուրքիայի հասարակական ու քաղաքական շրջաններում, զանգուածային տեղեկատվության միջոցներով աւելի ու աւելի յաճախ են արտայայտում մտահոգութիւններ Արցախում չդադարող բռնութիւնների, զինուած բախումների կապակցութեամբ:

«Մայակ» ռադիոկայանի հաղորդման համաձայն, թուրքական առաջատար «Միլլիէթ» թերթը հրատարակել է քաղաքական յայտնի լրագրող Մ. Ալի Բիրանդի մեկնաբանութիւնները, որն օրերս հանդիպումներ էր ունեցել Հայաստանի եւ Ադրբեջանի բարձրագոյն ղեկավարների հետ: Երկու հանրապետութիւնների յարաբերութիւններին է նուիրում եղել նաեւ նրա պատրաստած կեսեմային հեռուստաձրագիրը:

Ալի Բիրանդի հետ ունեցած հարցազրոյցի ժամանակ Հայաստանի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը, նշելով, որ Արցախի հիմնահարցը դուրս է եկել ազգային սահմաններից, համաձայնել է հակամարտութեան կարգաւորման գործում օտարերկրեայ պետութիւնների, այդ թում Թուրքիայի ներկայացուցիչների միջնորդ դերին: Նա ընդգծել է, որ հակամարտ 2 հանրապետութիւններն էլ պատրաստ են համագործակցել Թուրքիայի հետ ամենատարբեր բնագաւառներում:

Լեւոնային Ղարաբաղում տիրող դրութիւնը քննարկուել է նաեւ Ադրբեջանի վարչապետ Հասանովի՝ Թուրքիա կատարած այցելութեան ժամանակ: Վերլուծելով Արցախի հարցում կողմերի դիրքորոշումները, թուրք լրագրողն այն միտքն է յայտնել, որ Լեւոնային Ղարաբաղում ազգամիջեան հակամարտութեան կարգաւորումը հնարաւոր է միայն բանակցութիւնների ուղիով, մարդու իրաւունքները, ազգային փոքրամասնութիւնների իրաւունքները յարգելու պայմանով: Ի հարկէ, բանակցութիւնների անհրաժեշտութեան մասին Բիրանդի միտքը կարելի է հասկանալ, եթէ նկատի ունենանք այն, որ Ադրբեջանն իր անկախացման ճանապարհին շատ կտրուկ ու վտանգաւոր քաղաքական զիծ է որդեգրել Մոսկւայի հանդէպ եւ կարող է վերջինիս կողմից սպասուել եւ քաղաքական-ազգական ճնշման մեծացում եւ անսպասելի հարուած: Իսկ քանի որ ճնշումն ու հարուածը առաւելապէս հնարաւոր են արցախեան օջախում, ապա հասկանալի է, որ թուրք լրագրողի, եւ ոչ միայն նրա ցանկութիւնն է, որ այս կէտում նուազեցուեն ռուսների՝ Ադրբեջանին ոչ ձեռնտու քայլերը եւ ձեւական բանակցութիւններով ժամանակը ձգձգուի: Աւելի վտանգաւոր էր լինելու իր հերթին պրն. Տէր Պետրոսեանի «հրաւեր»ը թուրքերին քիթ խոթելու հայ-ադրբեջանական կոնֆլիկտի մէջ, իր բոլոր հնարաւոր հետեւանքներով, ռուսների դժգոհութիւն շարժելու իմաստով, բայց դարձեալ մտածենք, որ ասուածը ասուել է պարզապէս ասուած լինելու համար: Իսկ Թուրքիան այսօր չի էլ թաքցնում ՌՍՀՄում ստեղծուած քաղաքական խառնակ պահին հրաւիրութիւնը շափ Ադրբեջանին «առաջ հրել»-ու իր ցանկութիւնը: Այսօր նրա կողմից վերջինիս ցոյց է տրուում տնտեսական օգնութիւն եւ աջակցութիւն, զինուորական բարձրագոյն հրամանատարներ՝ բնականաբար ոչ զբօսաշրջիկութեան նպատակով այցելում են Բաքու, վերջապէս նա շտապեց ճանաչել Ադրբեջանի անկախութիւնը: Ի հարկէ, հին աղուեսը լաւ գիտէ, որ ոչ Ադրբեջանը եւ ոչ էլ Անդրկովկասը այդքան հեշտ դուրս չեն պրծնի ռուսի ձեռքից, սակայն նա շտապում է որոշակի

կարգաւիճակ եւ դիրքեր ապահովել Ադրբեջանի համար, որոնք որ կարելի է ակնկալել, կը պահպանեն նոյն մակարդակի վրայ, ընթացող գործընթացների սառեցումից յետոյ: Այս նոյն ժամանակ ընդարձութեան մէջ չէ Ադրբեջանի ներքին կեանքը: Կենտրոնական լրատուական ծրագրերից եւ այլ աղբիւրներից տեղեկանում ենք, որ Ադրբեջանի Պաշտպանութեան նախարարութիւնը ձեռնամուխ է եղել զինուորական ստորաբաժանումների ստեղծմանը: Ենթադրում է, որ մի քանի ամիս



անց հանրապետութիւնը կ'ունենայ իր բանակը: Ըստ լրագրող Մ. Մամեդովի հաղորդման, այս նախարարութիւնը ղեկավարում է 64-ամեայ Վ. Բուշատլին, որն ասարտել է ազգական 2 ակադեմիա: Նախարարը նշում է, որ Ադրբեջանը ստեղծելու է ոչ թէ աւազակային կազմաւորումներ, այլ օրինական սահմանադրական բանակ, որն իր վիճակի կը լինի պաշտպանելու հանրապետութեան շահերը: Յայտնի է, որ Գեանջայի տարածքում, օրինակ, այժմ կազմակերպուել են ապագայ բանակի նախապատրաստման խարխիւներ: Ադրբեջանցիք բազմիցս բանակցութիւնների մէջ են մըտնում հանրապետութիւնում տեղակայուած զօրամասերի տարբեր մակարդակի հրամանատարների հետ՝ զէնքի, զինամթերքի, զինուորական այլ միջոցների գնման համար, իսկ այդ նոյն ժամանակ վերջիններս հնարաւորին չափ զաղտնիաբար իրենց «ունեցուածք»-ը դուրս են բերում Ադրբեջանից եւ կամ տեղում ոչնչացնում այն: Ադրբեջանը փորձ արեց նոյնիսկ տիրանալու ԼՂՀ ներքին գործերի վարչութեան զէնքին: Նոյեմբերի 7ին հանրապետութեան ներքին գործերի նախարարութեան մի խումբ աշխատակիցներ, ԼՂՀ ներքին գործերի վարչութեան պետ զօրավար Կովալյովին ներկայացրել են նախարար Ասադովի հրամանագիրը, ըստ որի վարչութեան պահեստներում գտնուող ամբողջ զէնքն ու զինամթերքը պիտի յանձնուէր նախարարութեանը: Կովալյովը մերժել է պահանջը, որից յետոյ թուրքերը ստիպուած վերադարձել են Շուշի: Ի հարկէ, կատարուածում իր դերն է խաղացել նաեւ ժողովուրդը, որ շրջապատելով ու պատնէշներ սարքելով վարչութեան շէնք տանող բոլոր ուղիների առաջ, վճռականօրէն ընդդիմացել է Ասադովի հրամանագրին: ԼՂՀ ներքին գործերի վարչութիւնը ժողովրդի եւ տեղի իշխանութիւնների ճնշմամբ յաջորդ օրը ստիպուած եղաւ միլիցիայի բոլոր բաժանմունքներին յանձնել նրանց պատկանող տասնեակ ատոմատներն ու ժողովրդին պատկանող որսորդական հրացանները, որոնք ազգաւորել էին 88 թուականին: Իրադարձութիւնների այս ֆոնի վրայ շարունակուել է պահպանուել Արցախում բոլորեցուած հակամարտութեան թեժութիւնը: Դարձեալ ազգական առեւտրական կիզակետեր մտում են Հաղրութի շրջանը, Մարտունի քաղաքը, Ստեփանակերտի շրջա-

կայքն ու Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու շրջանների առանձին կէտեր:

Նոյեմբերի 7ին ադրբեջանցիները Ֆիզուլու շրջանից լայնածաւալ յարձակում են ձեռնարկել Հաղրութի շրջանի Աղբուլաղ, Խրմանջուղ եւ Բլուֆան գիւղերի ուղղութեամբ: ՕՍՕՆական լաւ զինուած ջոկատները, ներխուժելով ԼՂՀ տարածք, գրաւել են գիւղեր շրջապատող բարձունքները, սկսելով հայկական գիւղերի զընդակոծումը: Ինքնապաշտպանական ջոկատներն ու տեղ հասած ազատամարտիկները կազմակերպել են դիմադրութիւն տասնապատիկ գերազանցող ուժերի դէմ: Մինչեւ առաւօտ շարունակելով կատաղի մարտը, հայկական կողմը կարողացել է շրջանի տարածքից դուրս շարժել ՕՍՕՆականներին: ըԱպանուել են 1 հայ եւ 3 ադրբեջանցիներ: Յաջորդ օրը Հաղրութի շրջանի Հախուլու գիւղի կողմ է եկել ՕՍՕՆականների մի շարասիւն, որը սակայն ուժեղ հարուած ստանալով եւ զոհեր տալով յետ է քաշուել: Նոյն օրուայ կէսօրին նոր փորձ է արուել գրաւելու Աղբուլաղ գիւղը, որը նոյնպէս անյաջողութեան է մատնուել: Նոյեմբերի 11ին, վերջին օրերին երկրորդ անգամ Հաղրութ են ժամանել Լեւոնաղ Պետրոսեանը, զինուորական պարետատան եւ Ադրբեջանի մեկական ներկայացուցիչներ, որոնք ծանօթանալով իրավիճակին, փորձում են հաստատել զինադադարի մի պայմանագիր: Ոչ պաշտօնական աղբիւրներից ստացուած տեղեկութիւնների համաձայն, պայմանագրով նախատեսուել է տեղահանուած հայերին վերաբնակեցնել իրենց գիւղերում, իսկ ադրբեջանցիներին յետ բերել Տոդ: Պայմանագրի մասին այլ մանրամասներ յայտնի չեն:

Ոչ պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Նոյեմբերի առաջին տասնօրեակին Հաղրութում եւ սահմանակից տարածքում սպանուել են 2 հայ եւ 40 ադրբեջանցի:

Ժայռ աստիճան լարուած է մըտում իրավիճակը Մարտունի քաղաքում, որը մշտական բմբակոծումների ու գնդակոծումների է ենթարկում Խոջաւէնդ թաղամասի, ինչպէս եւ հարեան ադրբեջանաբնակ գիւղերի կողմից: Հակառակորդի ճնշումը վերջին օրերին մեծացել է յատկապէս ուղղաթիռով ՕՍՕՆականների նոր համալրումը տեղ հասցնելուց յետոյ: Չնայած սրան, հայերին յաջողուել է հակահարուած հասցնել: Նոյեմբերի 9ի կէսօրին Մարտունի են ժամանել ԼՂՀ գործկոմի նախագահ Լ. Պետրոսեանը, ՌՍՀՄ ԼԳՆ զօրքերի ընդհանուր հրամանատար Վ. Սափնը, արտակարգ դրութեան զինուորական պարետ ժինկինը, ՌՍՀՄ գլխաւոր շտաբի ներկայացուցիչներ: Պարետատանը նրանք հանդիպում են ունեցել Մարտունու պարետի եւ գործկոմի շրջանային խորհրդի նախագահ Լ. Սէյրանեանի հետ: Տեղի է ունեցել դժնփակ հանդիպում: Նոյեմբերի 10ին եւ 11ին կրկնուել են երկարատեւ յարձակումներ հայկական թաղամասերի վրայ: Նման հանդիպումների արդիւնք պէտք է համարել նաեւ յատուկ դրութեան խիստ ռեժիմի թուլացման միտումները, զօրքի չէզոքութեան քաղաքականութեան պահպանումը, որոնց պայմաններում յաղթահարում է ժողովրդի ընկճուածութիւնը, ինչպէս եւ հնարաւոր է դառնում ինքնապաշտպանութեան կազմակերպումը:

Նիւթերը վերցուած են Հ.Յ.Դ. Մամլոյ եւ Տեղեկատու Կենտրոնից